Հավելված 1

Հաստատում եմ՝

Տնօրեն՝ _____ Գ. Գրիգորյան

«26» սեպտեմբեր 2023թ.

Ներքին և արտաքին շահակիցներին տեղեկատվության տրամադրման և հետադարձ կապի ապահովման քաղաքականություն

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) շահակիցներին տեղեկատվության տրամադրման և հետադարձ կապի ապահովման քաղաքականությունը նպատակ է հետապնդում շահակիցներին ապահովել Հիմնադրամի ծավալած գործունեության, առանձին գործընթացների որակի վերաբերյալ տեղեկատվություն և հետադարձ կապի միջոցով մշտական կապ պահպանել վերջիններիս հետ:

Հիմնադրամում որակի կառավարման առանցքում է շահակիցների տեղեկացվածությունը և ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում:

Սույն քաղաքականությունը հնարավորություն է տալիս ապահովել շահակիցների մասնակցությունը Հիմնադրամի որակի կառավարման գործընթացներին:

Հիմնադրամը շահակիցներին տրամադրում է բացառապես փաստերի վրա հիմնված անաչառ որակական և քանակական տեղեկատվություն Հիմնադրամի առաջարկած կրթական ծառայությունների, դասավանդող և վարչական կազմի, գործող օրենսդրության, ռազմավարական պլանավորումների, միջազգային ծրագրերի, միջոցառումների, ընդունելության կազմակերպման, որակի ապահովման, գործունեության ընթացքում ունեցած ձեռքբերումների, բացթողումների, խոչընդոտների և այլնի մասին:

Ներքին և արտաքին շահակիցներին Հիմնադրամի գործունեության և որակի ապահովման մասին տեղեկատվության տրամադրման մեխանիզմներն են՝

- Հիմանդրամի կայք-էջը,
- սոցիալական հարթակները (facebook, instagram, linkedIn, Twitter),
- եռալեզու թերթը (Ֆիմուկյան ակնարկներ),
- երկլեզու բուկլետները,
- ամսագրերում տպագրված հոդվածները,
- հաշվետվությունները,
- ուսումնամեթոդական խորհրդի նիստերը, ժողովները, ֆոկուս-խմբային հանդիպումները,
- այլ:

Տեղեկատվության տրամադրման գործընթացն իրականացվում է Հիմնադրամի տնօրենի, տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալի, որակի ապահովման պատասխանատուի, գործավարի և SMM մասնագետի կողմից:

Տեղեկատվության տրամադրման իրականցման փուլերն են՝

- տեղեկատվության տրամադրման պլանավորում,
- իրականացնող անձի ընտրություն,
- իրականացման մեխանիզմի ընտրություն,
- տեղեկատվության տարածում:

Շահակիցների հետ հետադարձ կապը որակի գնահատման բաղադրիչներից է: Ուստի, Հիմնադրամը կարևորություն է տալիս շահակիցների հետ կայուն հետադարձ կապի ապահովմանը, որի միջոցով Հիմնադրամը հնարավորություն է ձեռք բերում բացահայտելու

գործունեության ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև, հիմնվելով հետադարձ կապի արդյունքների վերլուծության վրա, իրականացնել գործունեության բարելավում:

Ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմներն են՝

- Հիմանդրամի կայք-էջը (հետադարձ կապի դաշտ),
- սոցիալական հարթակները (մեկնաբանություններ, նամակներ)
- ուսումնամեթոդական խորհրդի նիստերի, ժողովների, ֆոկուս-խմբային հանդիպումների ընթացքում հնչած ելույթները,
- հարցումները,
- հեռախոսազանգերը,
- հանդիպումները,
- այլ:

Հիմք ընդունելով տեղեկատվության տրամադրման և հետադարձ կապի ապահովման կիրառվող մեխանիզմները և դրանց կիրառման արդյունքում հավաքագրված տվյալները՝ Հիմնադրամը իրականացնում է ուսումնասիրություն տրամադրված տեղեկատվության բավարարության, մատչելիության վերաբերյալ, ինչն էլ հնարավորություն է տալիս բարելավել գործող մեխանիզմները, մշակել նորերը:

Սույն փաստաթուղթը ուժի մեջ է մտնում հաստատման պահից: